



55. ՎԱԽԿՈՏ ՄԱՐԹՐ

Մե գեղի մեչ մե մարթ ու կնիկ կէղնին:

*Իրիկունը լուանակ գիշեր, կելնան դուա: Մարթ կըսե.— Ի՛նչ լավ
թալանի գիշեր է:*

*Կին կըսե.— Ա՛յ մա՛րթ, դու քու հալին սթրի, դու թալան էնող
չես, գիշերով ճամփա էրթող չես:*

*Մարթը նորեն կը դռռե.— Հաստատ լա՛վ գիշեր է, օղորթ լա՛վ
գիշեր է:*

*Կնիկ մարթուն հըլոնդեց, քցեց դեն ու ըսավ.— Դե, գնա ճամ-
փա կտռե:*

*Ինք մտավ տուն, ուր դուռը փակեց: Մարթ շատ աղաչեց, օր
դուռ բանա, ուր կնիկ դուռ չբացեց:*

*— Լավ,— ըսեց,— կնի՛կ, չըս բանա, չըս բանա, ընձի տուր մի
բուռըմ ալուր, մե հավկիթըմ ու մե բիզըմ:*

*Կնիկ ըտոնք դռան ծակեն տվեց ու ըսեց.— Դը գնա, թալանու-
թուն էրա տեսնիմ:*

*Մարթը դողդղալով ընկավ ճամփա, գնաց ու գնաց, շատ ու
քիչ ինք գիտեր, մե բանցըր սարի գլխուն մե քոշկ ու սարայի հան-
դըպավ: «Յավաշ, ըսավ, մտնիմ իտա տուն»: Ու մտավ: Մտավ իշ-
կեց, տեսավ, օր մըչ ըտ տան նստուկ են իրեք հատ դև, հաց կու-
տեն:*

Ըսեց.— Բարև ձրզի, ախպըրտիք:

Ըսին.— Բա՛րև, ախպեր ջան, հրամմեցե՛ք հաց ուտինք:

— Շնորակալ եմ,— ըսավ,— դուք անուշ էրեք, ես նոր ճա-

Ճապարի հետ իրեք-չորս հատ օխշար սաղ-սաղ կուլ տվեցի ու էկա,
կուշտ եմ:

Դեեր ասեցին.— Դու լե ժիր իս, էղնինք մեկ ախպեր, ապրինք
իրարու հետ:

— էղնինք,— ըսավ մարթը:

էղան ախպեր:

էտ դեեր ունին ուրանց համար մե ջուր բերելու տիկ, որը կը
վերցեր ուր մեչ մե տուն ջուր: Սրով կէրթեն ջուր բերելու, իրեք
օրեն հետ դորը հասավ էտ մարթուն: Մարթը վերուց գտիկ, ա՛նջաղ
վերուց վերև, գնաց հասավ ախպրի մոտ: Ինք ուրուն գինա, օր ըտ
բան ինք չը կոնե էնե, ուր դուվաթ շախտա:

Տիկը դրեց մե կողմ, վերուց լափատկեն ու սկսեց առու փորել
ու քար շարել: Դեեր տեսան օր էտ մարթ անկըցավ, հ՛ելան պզտիկ
ախպոր ճամփեցին. գնաց հոն, տըսավ օր ախպեր առու կը փորա,
քար կը շարե:

Հարցուց, ըսեց.— Ըտ ի՞նչ է կէնիս, ախպեր ջան:

Ըսավ.— Ջուր կը գառցում տանիմ գոան հ՛առեչ:

— Ձէ, ախպեր ջան, հըմալ բան աղեկ չէ, գարուն ջուր շատնա,
կէլլա կը լցվի մեր շենքերուն. արի, արի, ահան էս տիկ կըլնամ ու
կը տանիմ:

Ըրեկավ մարթ, ըսեց.— էհ, չըն թո՛ղի, մարթ աղեկ գործմ՛
էնե:

Հ՛ելավ ինք էլ քելելեն էկավ տուն: Պղտիկ դե իրան ախպըր-
տանց ըսեց էղելութեն: Ախպրտիք ըսեցին.— Ըտ իշկան ժիր մարթ
է, օր տկին շհավնի, առու կը գառցու, ջուր կը բերե: Օր հըմալ է,
ըտի շատ ուժեղ է:

Մե քանիմ օրից էտե մեկ լը փետ բերելու դոր էկավ հասավ
ուրին: Վերուց մե մենձ շըրիտ մը, գնաց հասավ մեշեն, ըտտեղ լե
ինք դիներ ուրան գորութուն, մնաց շիվարած, օր չը կառնա էն-
քան փետ տանի ինչքան օր կը տանին ուր ախպրտիք: Շըրիտ
սազ փատտեց մեշին ու իրար կապեց:

Դեեր տըսան օր էլի անկըցավ, հ՛ելան էլի պզտի ախպոր խըր-
կեցին, գնաց: Գնաց, ի՞նչ տըսավ: Սաղ մեշեն կապեր է, կը շալկե:
Գնաց ու խնթրվավ.— Ա՛յ ախպե՛ր,— ըսավ,— ի՞նչ կէնիս:

— Փետ կը տանիմ:

— Ախպեր ջան,— ըսեց,— ըտմալ փետ չը՛ կարելի տանել, սաղ
մեշեն տանիս, ուրիշ տարին էլ մենք ի՞նչ վառինք:

Դեւը շերիտ հարցկեց, ըսկըսեց ջարթել մեկ լավ շաւակ փետու բելեց:

Ախպերն էլի ըորկավ.— էհ,— ըսավ,— չըն թողի՝ մարթ մեկեն ըորըմի փետ առնե էրթա: Հ'ըմմընօր, հ'ըմմընօր մեկ-մեկ շաւակ, մեկ-մեկ շաւակ, ըտ ի՞նչ է, տո՛:

Էկան տուն: Դեւը պատմեց ուր ախպրտանց, ըսեց.— Այ մարթ, ըտի շատ ժիր է, հըմ լե ուժով: Մեշին մեկեն կապեր էր, կը շաւկեր, օր բերեր: Անջա՛խ մե հասա հոն, օր շուտ չը դացեր ինք, սա՛ղ մեշեն կը բերեր տուն:

Սենձ ախպեր ըսեց.— Օր հըմալ է, ըտոր ուժ փորցինք:

Իրիկուն նստան, մենձ դե ըսեց.— Ախպրտանք, արեք մեր խը-վաթներ փորցինք:

Մարթը.— Փորձինք,— ըսավ վախկոտութենից:

— Արեք,— ըսեց մենձ դեւը,— քար քամինք, ջուր կաթըցունք:

Մարթը անվախ ըսավ.— Քամի՛նք:

Վերցուցին ամեն դե մեկ-մեկ քար, քամեցին. ջուր չը կաթաց: Մարթը վերուց քարը, դրավ ջեք, ուր հավկիթ հանեց, քամե՛ց, քամե՛ց, կա՛թ, կա՛թ ջուր կաթեց: Զարմացան: «Հաստատ, տո, ուժեղ է», ըսին: «Ապրիս, ախպեր ջան, ապրիս», ըսին:

Ըսեցին.— Արեք մե փորցմ՛ էլ էնինք: Քար քամինք, շինինք ալուր:

Դեւեր վերցուցին, քարը քամեցին, ալուր դուս շէկավ:

Նորից վերուց մարթը, քարը դրավ ջեք, ուր ալուր հանեց, քամե՛ց, քամե՛ց, ալուր սըռաց՛:

Զարմացան: «Օղորթ օր խալաթով է», ըսին:

Դեւեր գողտու ուրանց մեշ խոսացին՝ «Մեկմ՛ էլ էտոր փորցինք, դիշեր օր էտիկ քնավ, էրթանք կացիններով ըսպանենք»:

Մարթը լսեց ըտոնց դաւտընին: Մե փեշըմ բերեց դրեց մըշ ուր տեղին, փալաս քաջեց վրոն, ինք մտավ առզլի՛² տակ: Կես դիշեր հըլը չըր էդեր է, իրեք ախպերն էլ էկան կացիններով: Տվեցին էտ տղին, տվեցին, ուրանց զարկելուց ուրանք լե կը վախենին, թե՛ «Ըտ ինչ դըտըր պինդ ջան ունե, օր կացին չի իշնա»: Թողին դնացին:

Առավոտուն մարթը հ'ելավ պառկավ վըր առլեղին: Քնեն օր զարթե՛նց՝ էկավ ախպրտանց քով, բարի լուս տվեց, դեւեր տեսան, շիվարան:

1 Սահելով հոսել (Մ. Բ.):

2 Փայտյա թախտ (Մ. Բ.):

Մեկեւի օր օրոշին.— Ախպեր, արեք մըր էղած բաժնինք, բաժնը վիճիք իրարուց:

— Բաժնը վիճիք,— ըսավ մարթը:

Բերեցին օսկին, տաս կոտ բաժին էրեցին շորս տեխով: Մարթը շամաձայն վավ:— Էս կտորը ես ո՞րման շալկիմ տանիմ, ամոթ չէ՞: (Շրմա չըր կըռնեք շալկե, ընդոր համար էլ ըտմալ ըսեք էր)¹:

Դեկը վերցուցին մե կոտըմ էլ տվին, էլի մարթն ըսեց.— Չէ՛, ախպեր, ես կտոր չըմ տանի, ամոթ է ընձի համար:

Էս անդամ ուրանց փողպատը աղատեալու համար ջվալը լիք լցին, պզտիկ ախպոր շալակ տվին, ինք էլ հ'եւալ վրեն նստավ ու գնացին:

Պզտիկ ախպեր շատ աղաչեց, օր մարթը ուր խվաթ շատ չթողե դեի վրեն: Շրմա մարթը չը լսեց, բիզը հանեց, լավ մե խոթեց վզի մեջ:

— Վա՛յ, ախպեր,— ըսեց,— ուժդ քիչըմ բանցր պայե, չըմ կըռնա դիմանա:

— Հա՛, հա՛, ախպեր ջան,— ասեց մարթը, հըմա մե էրկու-իրեք անքամ ըտմալ փորցեք էրեց, հարի հասան ուր տուն: Տուն օր հասան, դեի վրեցեն իջավ, դեք բեռը քցեց ու փնչաց: Օր փնչաց, մարթը քամուց թռավ կպավ հ'առիքը:

— Ախպեր ջան,— ըսավ,— էտ ի՞նչ կէնիս:

Կնիկը թեզըմ ըսեց.— Շըյնա մենձ գերան կը բերե, օր քու էտեք խոթե:

Դեն օր լսեց, թողեց ու փախավ: Մարթ ու կնիկ օսկու ջ'ալ տեղավորեցին, ուրախցան:

Էտ վախտ մե աղվեղ կայնած կէղնի էտ մարիու էրթըքին: Մարթը կը պարզենա ուր կնկա քով, թը.— Տեսա՞ր, ինչ էնեցի, իմալ պաջարեցի, խափի դեկրուն, իտաքան լե օսկի բերի:

Աղվեզը էրթըքից.— Լա՛վ, լա՛վ,— ըսավ,— ահան ես գնացի դեկրու քով: Դու վախկոտ մարթ, էրթաս խափիս դեկրուն, օսկի՞ բերիս:

Ու դնաց, ասավ դեկրուն.

— Այ մարթիք, ընի ձըզի խափեր է, վախեցուցեք է. ինքը շատ վախկոտ է, խվաթ էլ ուհո՛ւ՞ չունի:

¹ Բացատրութիւնը ասացողին է (Մ. Կ.):

² Բուլբուլին (Մ. Բ.):

Պզտիկ դերը լը հավատաց.— Սուտ կէնի աղվեզ, իմ աչքով
իմ տեսի ընդոր խվաթ:

— Չե՞ս հավատա, հ'ելինք, իրար հետ էրթանք, առնինք զօս-
կին գանք,— ըսավ աղվեզ:

Դեեր օրոշին, պզտիկ դեն էրթա առնե ու գա: Դեն ըսավ.—
Աղվեզ կը խափե, թը լը խափե, շըրիտի մեկ գլոխ կապինք աղվըզի
պոչ, մեկ լե՛ իմ պոչ, իրար հետ էրթանք, օր լը խափե, ընձի տա-
նե քցե տուղաղ, ինք լը փախնի:

Հ'ելան էկան:

Մարթը դիտեր օր աղվեզ գնացեր է, դեերին կը բերե, հ'ելավ
դնաց դեղեն դուս, իշկեց, օր էկան: Վագեց աղվեզի հ'առեչ, բարև
տվեց, ըսեց.— Բու պապըդ օր իմ պապիս մե դերմ էր տալիք, էտ
դեին իս բերի՞, շա՞տ շնորհակալ ինք, աղվեզ ջան:

էտ խոսք օր լսեց, դեր փախավ աղվեզին քաշկըռնելով, խեխ-
տըռտելով: Հարի տեղ հասավ, աղվեզ լը իրան առավ: Պզտի դե
գնաց ուր ախպրտանց պատմեց գլխի էկած բաները:

